ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 59-Ա/2 **«19» հունվար 2026 թ.**

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2026 թվականին անցկացվող՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի՝

1) կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 2-ի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2026 թվականի հունվարի 19-ի
№ 59-Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2026 թվականին անցկացվող սեղանի թենիսի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է.

1) դպրոցականների շրջանում մասսայականացնել սեղանի թենիսը,

2) դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը,

3) տաղանդավոր, հեռանկար ունեցող մարզիկների հայտնաբերումը՝ հետագայում Հայաստանի Հանրապետության առաջնություններին մասնակցելու նպատակով,

4) ապահովել ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչությունը:

2. Խնդիրներն են՝

1) դպրոցականների ոչ բավարար ներգրավվածությունը սեղանի թենիսի պարապմունքներին և առողջ ապրելակերպի ոչ բավարար քարոզչություն,

2) դպրոցականների զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի անցկացմանն աջակցում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը, համայնքապետարանները, Երևանի քաղաքապետարանը, Երևանի վարչական շրջանների աշխատակազմերը և «Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ֆեդերացիա).

5. Մրցաշարն անցկացվում է 3 փուլով՝

1) 1-ին՝ համայնքային և վարչական շրջանների փուլը կազմակերպում են համայնքապետարանները և Երևանի վարչական շրջանները՝ մրցավարական հանձնաժողովի հետ: Անցկացման հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը,

2) 2-րդ՝ մարզային և Երևան քաղաքի փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը,

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Նախարարությունը և Ֆեդերացիան:

4) 1-3-րդ փուլերի մշտադիտարկումն իրականացնում են Նախարարությունը և Ֆեդերացիան:

6. Յուրաքանչյուր փուլի կազմակերպման պատասխանատուները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ապահովելու աշակերտների, ուսուցիչների, մրցավարների և հանդիսատեսի անվտանգությունը և բժշկական օգնության ծառայությունը:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

7. Մրցաշարն անցկացվելու է 2026 թվականի մարտ-մայիս ամիսներին՝

1) 1-ին փուլ՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում, Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ մարտի 1-ից 31-ը,

2) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում՝ 2 ապրիլի 1-ից 20-ը,

3) 3-րդ եզրափակիչ փուլ՝ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում մայիսի 2-3-ը:

8. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի 41 համայնքներում (տարածաշրջաններում) և Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում (մասնակից դարձնելով բոլոր 12 վարչական շրջաններին):

9. 2-րդ փուլն անցկացվելու է՝

1) Արագածոտնի մարզ՝ ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին,

2) Արարատի մարզ՝ ք. Արտաշատ, ք. Մասիս, ք. Արարատ,

3) Արմավիրի մարզ՝ ք. Արմավիր, ք. Մեծամոր, ք. Էջմիածին,

4) Գեղարքունիքի մարզ՝ ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Սևան, ք. Վարդենիս,

5) Լոռու մարզ՝ ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր,

6) Կոտայքի մարզ՝ ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ,

7) Շիրակի մարզ՝ ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա, գ. Աշոցք, գ. Ախուրյան,

8) Սյունիքի մարզ՝ ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի,

9) Վայոց ձորի մարզ՝ ք. Եղեգնաձոր, ք. Վայք, ք. Ջերմուկ,

10) Տավուշի մարզ՝ ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ,

11) Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում՝ Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Աջափնյակ, Էրեբունի-Նուբարաշեն, Դավթաշեն, Ավան-Նորք Մարաշ:

10. Վերոնշյալ տարածաշրջաններն ընդգրկում են տվյալ համայնքները, մոտակա համայնքներն ու բնակավայրերը: Ուսումնական հաստատությունները հայտերը ներկայացնում են որպես համակարգող սահմանված համայնքապետարան կամ վարչական շրջանի աշխատակազմ:

IV. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Մրցաշարն անցկացվում է 2 տարիքային խմբերով՝ մասնակցում են Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների 5-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը:

12. Մրցաշարին չեն կարող մասնակցել «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ», «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի քոլեջի սովորողները:

13. Յուրաքանչյուր դպրոցի թիմերի կազմը՝ 5-9-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ, 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ, 10-12-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ, 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

14. Մրցաշարի 1-ին փուլին կարող են մասնակցել հայտ ներկայացրած թիմերը:

15. 2-րդ փուլին մասնակցում են 1-ին փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցների թիմերը:

16. 3-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են 2-րդ փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին տեղերը գրաված դպրոցների թիմերը:

17. Եզրափակիչ փուլում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի թիմերը ներկայացնում է մարզպետի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի 1 պատասխանատու:

18. Մրցումների յուրաքանչյուր փուլի ավարտից հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը հաշվետվություն են ներկայացնում Նախարարություն՝ միջոցառման անցկացման արդյունքների և հաջորդ փուլ անցած մասնակիցների վերաբերյալ:

19. Մրցաշարի ժամանակացույցը և անցկացման ընթացքը պետք է լուսաբանվի Նախարարության, մարզպետների աշխատակազմերի, համայնքապետարանների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների պաշտոնական կայքերում, սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներով:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

20. Մրցաշարի ընթացքում յուրաքանչյուր տարիքային խմբի թիմերը պարգևատրվում են՝

1) 1-ին փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով,

2) 2-րդ փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով և գավաթներով,

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլում՝ յուրաքանչյուր տարիքային խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով՝ դպրոցի մարզական ենթակառուցվածքների բարելավման կամ մարզական գույք ձեռք բերելու նպատակով.

1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվում է՝ 4,000,000 ՀՀ դրամով,

2-րդ տեղը՝ 2,500,000 ՀՀ դրամով,

3-րդ տեղը՝ 1,500,000 ՀՀ դրամով:

Պարգևատրվում են նաև դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչները.

1-ին տեղ՝ 700,000 ՀՀ դրամ,

2-րդ տեղ՝ 500,000 ՀՀ դրամ,

3-րդ տեղ 300,000 ՀՀ դրամ:

Մրցաշարի հաղթող թիմերի աշակերտները պարգևատրվում են դրամական մրցանակներով.

1-ին տեղ՝ (4 մասնակից) 150,000-ական ՀՀ դրամ,

2-րդ տեղ՝ (4 մասնակից) 100,000-ական ՀՀ դրամ,

3-րդ տեղ՝ (4 մասնակից) 75,000-ական դրամ:

Հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն:

Երկու տարիքային խմբերում 4-11-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում է 2-ական թենիսի սեղան և շնորհակալագիր:

VI.ԾԱԽՍԵՐԸ

21. Մրցաշարի անցկացման ծախսերն իրականացվում են՝

1) 1-ին համայնքային փուլի մրցավարներին սննդի ընդունման օրական վճարի և հավաստագրերի ծախսերն իրականացվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

2) 2-րդ մարզային փուլի մրցավարներին սննդի ընդունման օրական վճարի, ճանապարհածախսի, գավաթների և հավաստագրերի ծախսերն իրականացվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլի անցկացման հետ կապված ծախսերը՝ մասնակիցներին և մրցավարներին՝ գիշերավարձի ու սննդի ընդունման օրական վճարի, տրանսպորտային ծառայության, կամավորներին՝ սննդի ընդունման օրական վճարի և տրանսպորտային ծառայության, մասնակիցներին, մրցավարներին և կամավորներին՝ մարզահագուստ (մարզաշապիկ), թիմերին՝ գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր թղթապանակներով, կաշվե թղթապանակներ, հուշանվերներ, պատվավոր հյուրերին՝ ծաղիկներ, հաղորդավարի ծառայության, տպագրական նյութերի, մասնակցության համարներ, գրենական պիտույքների, դրոշների, տարածքի ձևավորման, նկարահանման, ուղիղ եթերի ապահովման, գովազդի և տեսահոլովակի պատրաստման, շարժական բեմի և լեդ էկրանի, ձայնային և լուսային տեխնիկայի ապահովման, մրցանակակիրներին և մրցավարներին դրամական պարգևատրման, 4-ից 11-րդ տեղեր գրաված դպրոցների

համար 2-ական թենիսի սեղանների ձեռքբերման, խարույկի կազմակերպման (պուֆիկներ, փայտ, վառելանյութ, կրակամաներ), ծրագրի ղեկավարի, համակարգողի, սպասարկող անձնակազմի, բանվորների, հաշվապահի, գնումների համակարգողի վարձատրության ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

VI. ՀԱՅՏԵՐԸ

22. Մրցաշարի համայնքային և Երևան քաղաքի վարչական շրջանների փուլի հայտերը (համաձայն հավելված №2-ի) ուսումնական հաստատությունները ներկայացնում են համայնքապետարանների և վարչական շրջանների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներ մինչև փետրվարի 20-ը:

23. Համայնքային և Երևան քաղաքի վարչական շրջանների փուլի բոլոր մասնակիցների թվի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր և Երևանի քաղաքապետարան մինչև փետրվարի 28-ը:

24. ՀՀ մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը՝ ըստ կանոնակարգով սահմանված տարածաշրջանների և Նախարարության կողմից տրամադրված ձևաչափի, համայնքային փուլի մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են Նախարարություն մինչև մարտի 7-ը:

25. Եզրափակիչ փուլի մասնակցության հայտերը ՀՀ մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը Նախարարություն են ներկայացնում մարզային և քաղաքային փուլի ավարտից հետո՝ **5-օրյա ժամկետում**:

26. Յուրաքանչյուր փուլի պատասխանատուները պարտավոր են ստուգել թիմերի մասնակիցների համապատասխանությունը կանոնակարգի պահանջներին (աշակերտի տարիքը և տվյալ դպրոցի սովորող լինելու փաստը):

27. Յուրաքանչյուր փուլի մրցումներից առաջ գլխավոր մրցավարական հանձնաժողովին են ներկայացվում թիմերի մասնակցության անվանական հայտերը՝ հաստատված դպրոցի տնօրենի և բժշկի կողմից (հավելված № 2): Միաժամանակ ներկայացվում է՝

1) աշակերտի անձնագիրը կամ ծննդյան վկայականը,

2) տեղեկանք դպրոցից լուսանկարով:

28. Տրամադրված փաստաթղթերի հիման վրա հաստատվում է թիմի մասնակցությունը: Անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում մասնակիցը զրկվում է խաղերին մասնակցելու իրավունքից:

29. Կանոնակարգի պահանջների համապատասխան կետերի խախտման դեպքում թիմը կորակազրկվի:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2026 թվականի հունվարի 19-ի
№ 59-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ

2025 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ»
սիրողական սեղանի թենիսի մրցաշարի _____փուլի

ՀՀ _____մարզի «_____» դպրոցի

---------- տարիքային խմբի թիմի

---- ----------2026 թ.

№	Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը	դասարան	ծննդյան օր, ամիս, տարեթիվ	ԴԿՏՀ (emis.am) համարը	անձնագրի կամ ծննդյան վկայականի համարը	բնակության հասցե
1.						
2.						
3.						
4.						

№	**Ֆիզկուլտուրայի ուսուցչի (թիմի ներկայացուցիչ) անունը, ազգանունը**	**Անձնագրի կամ ID համարը**	**Հեռախոսի համարը**
1.			

* Հայտին կից ներկայացվում են՝ 1) աշակերտների անձնագրերի կամ ծննդյան վկայականների լուսապատճենները, 2) տեղեկանք դպրոցից՝ լուսանկարով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ /_____/ **Կ.Տ**
Ստորագրություն, անուն, ազգանուն

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ՝ / _____/
Ստորագրություն, անուն, ազգանուն

ԲԺԻՇԿ՝ / _____ / **Կ.Տ**
Ստորագրություն, անուն, ազգանուն